

021801.00.6 Արվեստի տեսություն և պատմություն

021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում բակալավրի մասնագիտական կրթական ծրագրով ԵԹՎՊԻ-ի դիմորդը հանձնում է երեք քննություն.

1. Արվեստի կառավարում
2. Հարցազրույց
3. Հայոց լեզու, գրականություն (ոչ մրցութային)

Դիմորդը փաստաթղթերի հետ պետք է ներկայացնի.

- ✓ **ինքնակենսագրություն** (ազատ ոճով՝ ներառելով տեղեկություններ տարիքի, քաղաքացիության, կրթության, օտար լեզուների իմացության, ընտանեկան դրության, աշխատանքային փորձի մասին, նաև մասնագիտության ընտրության հիմնավորումը և հետագա ինքնուրույն աշխատանքի մասին պատկերացումները),
- ✓ **մշակութային միջոցառման նախագծի գաղափար** (դիմորդը պետք է շարադրի մոտավոր բովանդակությունը՝ հիմնավորելով ընտրությունը, ներկայացնի գաղափարի ստեղծագործական, արտադրական, ֆինանսական, կազմակերպական իրագործման եղանակները, ենթադրյալ աշխատանքային ստեղծագործական կազմը, առաջարկի իր նախագծի գովազդի ձևերն ու եղանակները): Ծավալը՝ համակարգչային շարվածքով 3-5 էջ:

Արվեստի կառավարում քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ առաջարկված իրավիճակում որոշումներ կայացնելու ունակություն՝ 0 - 5 միավոր,
- ✓ իրավիճակը վերլուծելու ունակություն՝ 0 - 5 միավոր,
- ✓ նախապես ներկայացված նախագծի գաղափարի հիմնավորում, իրագործման գործընթացի քայլերը տեսնելու կարողություն՝ 0 - 10 միավոր:
Քննության ընթացքում կստուգվեն դիմորդի պատկերացումները կառավարման (մենեջմենթի) ոլորտում՝ հարցատոմսերով:

Հարցազրույց քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ պիեսի վերլուծություն՝ 0 - 7 միավոր.
- ✓ ֆիլմի վերլուծություն՝ 0 - 7 միավոր,
- ✓ մշակույթի տարբեր ոլորտների, Հայաստանի մշակութային կյանքի իմացություն՝ 0 - 6 միավոր:
Քննությունն ընթանում է նախապես հայտարարված թեմաների շրջանակում՝ հարցատոմսերով:

«Հայոց լեզու, գրականություն» քննության գնահատականը մրցութային միավոր չէ:

021801.01.6 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում ՄԿԾ-ի
2018թ. ընդունելության ծրագիր

Պիեսներ

- 📖 Վ.Շեքսպիր «Ռոմեո և Ջուլիետ», «Համլետ», «Օթելլո»
- 📖 Ժ.-Բ. Մոլիեր «Դոն Ժուան»
- 📖 Հ.Իբսեն «Տիկնիկների տուն» («Նորա»)
- 📖 Մ.Լերմոնտով «Դիմակահանդես»
- 📖 Ա.Գրիբոյեդով «Խելքից պատուհաս»
- 📖 Ն.Գոգոլ «Ռևիզոր»
- 📖 Ա.Չեխով «Բալենու այգի»
- 📖 Գ.Սունդուկյան «Պեպո»
- 📖 Հ.Պարոնյան «Պաղտասար աղբար»
- 📖 Ալ.Շիրվանզադե «Պատվի համար»
- 📖 Լ.Շանթ «Հին աստվածներ»

Ֆիլմեր

- 🎬 Հ. Բեկնազարյան «Նամուս», «Պեպո»
- 🎬 Ֆ. Դովլաթյան «Բարև, ես եմ», «Սարոյան եղբայրներ»
- 🎬 Հ. Մալյան «Եռանկյունի», «Նահապետ»
- 🎬 Ս. Փարաջանով «Նռան գույնը»
- 🎬 Է. Քյոսայան «Տղամարդիկ», «Անորսալի վրիժառուները»
- 🎬 Ֆ. Ֆելինի «Ութ ու կես», «Ամարկոբո»
- 🎬 Ս. Էյզենշտեյն «Պոտյոմկին» գրահանավը»
- 🎬 Չ. Չապլին «Մեծ քաղաքի լույսերը», «Փոքրիկը»
- 🎬 Ս. Սպիլբերգ «Շինդլերի ցուցակը», «Բնդիանա Ջոնս»
- 🎬 Ն. Միխալկով «Անավարտ պիես մեխանիկական դաշնամուրի համար», «Արևից ուժասպառները», «Սիբիրյան սափրիչ»
- 🎬 Ք.Տարանտինո «Քրեական ընթերցելիք», «Սպանել Բիլլին»
- 🎬 Կ.Նոլան «Բեթմեն. սկիզբ», «Մե սապետ»
- 🎬 Է. Կուստուրիցա «Underground»
- 🎬 Մ. Սկորսեզե «Անիծյալների կղզին»
- 🎬 «Աննա Կարենինա» վեպի էկրանավորումները (Ալեքսանդր Զարխի, Բեռնարդ Ռոսս, Քլարենս Բրաուն, Ջո Ռայթ, Սերգեյ Սոլովյով)

Այլ թեմաներ

- ✓ Երևանի թատրոնները, կինոթատրոնները, համերգասրահները, պատկերասրահները, թանգարանները
- ✓ Թատրոնի, կինոյի և հեռուստատեսության առանձնահատկությունները
- ✓ Կինոյի ստեղծումը, հայկական կինոյի ստեղծումը. կինոյի ժանրերը
- ✓ Հայկական և արտասահմանյան հեռուստաալիքներ, հեռուստահաղորդումներ
- ✓ Գովազդի դերն ու նշանակությունը: Հասարակայնության հետ կապեր (PR)
- ✓ Փառատոներ, մրցույթներ (ՈՍԿԵ ԾԻՐԱՆ, ՀԱՅՖԵՍՏ, ՕՍԿԱՐ, այլ)
- ✓ XX դարի հայ ականավոր արվեստագետներ (թատրոն, կինո, գրականություն, երաժշտություն, կերպարվեստ)
- ✓ Վեբ-կայքեր մշակույթի, արվեստի վերաբերյալ (թատրոններ, կինոթատրոններ, փառատոներ, թանգարաններ, հեռուստաընկերություններ, գրադարաններ, այլ)